

**ԲԱՂԱԴՐՅԱԼ ՍՏՈՐՈԳՅԱԼԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ  
ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ**

**ԱՐՏԱՇԵՍ ՍԱՐԳՍՅԱՆ**

Համաձայնությունը՝ որպես շարահյուսական կապակցման միջոց, կարող է գործել ոչ միայն պարզ և բարդ նախադասությունների տարբեր անդամների ու միավորների, այլև մեկ անդամ կազմող միավորների միջև: Խոսքը վերաբերում է ստորոգելիի և հանգույցի (ստորոգելիական վերադրի և վերացական բայի) միջև առկա համաձայնությանը: Ստորոգելին և հանգույցը միասնաբար հանդես են գալիս որպես նախադասության մեկ անդամ՝ բաղադրյալ ստորոգալ: Բաղադրյալ ստորոգյալի ու նրա տեսակների վերաբերյալ տարբեր կարծիքներ կան: Տարակարծություններ կան նաև *ստորոգելի*, *ստորոգելիական վերադիր*, *հանգույց*, *վերացական բայ* հասկացությունների վերաբերյալ, սակայն դրանք մեր քննած խնդրին մասնակիորեն են առնչվում և մի առանձին ուսումնասիրության նյութ են: Ուստի, չանդրադառնալով ստորոգյալի տեսակների ու նրա բաղադրիչների վերաբերյալ կարծիքներին, քննենք միայն այդ բաղադրիչների միջև դրսևորվող համաձայնությունը, քանի որ այդ կառույցները, ստորոգյալի ինչ տեսակ էլ համարվեն, գոյություն ունեն և լայնորեն գործածվում են:

Եթե փորձենք պարզել, թե տեսականորեն քերականական որ կարգերով է հնարավոր ստորոգյալի բաղադրիչների միջև համաձայնությունը, ապա պարզ կդառնա, որ այն պետք է հնարավոր լինի *դեմքի*, *թվի* և *հաստատման-ժխտման* կարգերով, քանի որ այդ կարգերն են, որ կարող են ընդհանուր լինել խոնարհում չունեցող (անվանական կամ անկախ դերբայով արտահայտված) և խոնարհում ունեցող (բայական դիմավոր) մասերի համար: Բաղադրյալ ստորոգյալի դիմավոր բայերով արտահայտված մասին այդ կարգերը միշտ բնորոշ են, իսկ խոնարհում չունեցող մասի դեպքում դրանց դրսևորումը պայմանավորված է մի քանի հանգամանքով: Ստորոգելիական վերադիրը կարող է արտահայտվել տարբեր խոսքի մասերով (նաև անդեմ բայերով), որոնց մի մասին բնորոշ չեն դեմքի, թվի և հաստատման-ժխտման քերականական կարգերը: Ուստի համաձայնությամբ կապակցումը հնարավոր է միայն այն դեպքում, երբ վերադիրն ունի այդ կարգերը կամ գոնե դրանցից մեկը: Անդրադառնանք համաձայնության դրսևորման դեպքերին առանձին-առանձին:

*Դիմաթվային համաձայնություն:* Բայից բացի՝ դեմքի կարգ ինքնին

ունեն *ես, դու, նա* անձնական դերանունները, իսկ մի շարք այլ դերանուններ, գոյականները, ինչպես նաև փոխանվանաբար գործածված բառերը (ածականներ, թվականներ, դերբայներ) դեմքի կարգ կարող են արտահայտել դիմորոշ հոդ ստանալով (օրինակ՝ *բոլորս, ամենքս, նկարիչս, նվաստս, երեքս, ստեղծողս*): Հետևաբար բաղադրյալ ստորոգյալի խոնարհում ունեցող մասի և վերադրի միջև դիմային համաձայնություն կարող է լինել այն դեպքում, երբ հանգույցն արտահայտված է անձնական դերանուններով կամ դիմորոշ հոդի միջոցով դեմքի կարգ ստացած բառով: Նշենք նաև, որ դիմային այդպիսի համաձայնություն լինում է միայն այն դեպքում, երբ ստորոգելիական վերադիրը դրված է ուղղական հոլովով:

*Ուղղական հոլովով անձնական դերանուն+եմ* (կամ *վերացական բայ*) կառույցների մասին տարբեր կարծիքներ կան: Նկատի չունենք որպես բաղադրյալ ստորոգյալ դրանց տեսակի որոշման ու բնորոշման վերաբերյալ եղած տեսակետները, որոնց, ինչպես նշեցինք, այստեղ չենք անդրադառնում: Լեզվաբանների մի զգալի մասը, անկախ նրանից, թե ստորոգյալի ինչ տեսակ է համարում այս կառույցները, դրանք այնուամենայնիվ ստորոգյալ է համարում: Այս կառույցներում առկա է ստորոգելիական վերադրի և հանգույցի (կամ վերացական բայի) դիմաթվային համաձայնություն: Եթե վերադիրն արտահայտված է անձնական դերանունով, ապա համաձայնությունը միաժամանակ և՛ դիմային է, և՛ թվային, քանի որ անձնական դերանվան յուրաքանչյուր դեմք և թիվ արտահայտվում են մեկ տարահիմք բառաձևով, այսինքն՝ յուրաքանչյուրի միջոցով դեմքն ու թիվը արտահայտվում են միասնաբար (*ես, դու, նա, մենք, դուք, նրանք*): Հետևաբար այդ դեպքում հնարավոր չէ միայն դիմային կամ միայն թվային համաձայնություն:

Հ. Օհանյանը ենթակայի և ստորոգյալի համաձայնությունը քննելիս հետևյալն է գրում. «Ենթակայի և ստորոգյալի դիմային համաձայնության մեջ շեղում է նկատվում նաև այն ժամանակ, երբ ստորոգելիական վերադիրը արտահայտված է առաջին կամ երկրորդ դեմքի անձնական դերանվամբ, իսկ ենթական՝ գոյականով կամ գոյականաբար կիրառված որևէ խոսքի մասով, օրինակ՝ *Այդ բոլորի պատճառը էս էմ: Այդ բոլորի պատճառը դու էս*: Այստեղ ենթակայի և ստորոգյալի դիմային համաձայնության փոխարեն կարծես առկա է ստորոգելիական վերադրի և նրա հանգույցի համաձայնությունը<sup>1</sup>: Ռ. Իշխանյանն էլ նշում է հետևյալը. «Եվ այսպես. առաջին և երկրորդ դեմքի դերանունների առկայությունը նախադասության մեջ կարող է խախտել ենթակայի քերականական հատկանիշների կանոնը, և ենթական կարող է դեմքով չհամաձայնել դիմավոր բայի հետ»<sup>2</sup>:

<sup>1</sup> Ս. Աբրահամյան, Ն. Պառնասյան, Հ. Օհանյան, Խ. Բաղիկյան, Ժամանակակից հայոց լեզու, հ. 3, Եր., 1976, էջ 302:

<sup>2</sup> Ռ. Իշխանյան, Արդի հայերենի շարահյուսություն: Պարզ նախադասություն, Եր., 1986, էջ 100:

Իսկ ինչո՞ւ է համաձայնություն առաջանում վերադրի և հանգույցի միջև: Ստորոգյալը քննելիս այդ մասին ակնարկում է Գ. Ջահուկյանը: Նա գրում է. «Եթե ստորոգելին որոշյալ առարկա է, ապա այդ նշանակում է, որ ենթակայի առարկայական կոնկրետ բովանդակությունը պարզ չէ և պարզվում է ստորոգելիի միջոցով. ստորոգելին որոշյալ արժեք է ստանում կամ դերանվան, կամ որոշիչ հոդ ունեցող բառերի միջոցով. այս դեպքում ստորոգելին նշում է խոսողի՝ ենթակայի նշանակած առարկան ճանաչելու աստիճանը՝ «Գրիգորն ո՞վ է» - «Գրիգորն իմ բարեկամն է», «Գրիգորը ես եմ» և այլն»<sup>3</sup>: Թերևս հենց այս պատճառով է, որ անձնական դերանուններով արտահայտված վերադրի և հանգույցի միջև համաձայնությունը առաջ է գալիս միայն ուղղական հոլովով արտահայտված դերանունների դեպքում, քանի որ իմաստային ևս մեկ հարաբերակցություն է առաջանում ուղղական հոլովով արտահայտված ստորոգելիի և ուղղական հոլովով արտահայտված ենթակայի միջև:

Պ. Պողոսյանը հակադրվում է ընդունված կարծիքին և գտնում, որ այսպիսի կառույցներում ուղղական հոլովով դրված առաջին և երկրորդ դեմքերի անձնական դերանունները փոխված շարադասությամբ ենթականեր են, այսինքն՝ դարձյալ առկա է ենթակայի և ստորոգյալի համաձայնություն<sup>4</sup>. *Իմնտ. Դու ավագն ես // Ավագը դու ես*: Պ. Պողոսյանը զարգացնում է հետևյալ հիմնադրույթը. «Հաղորդող անձի ետը դառնում է կենտրոն, որից ծավալվում են բոլոր գործողությունները ժամանակի ու տարածության մեջ: Անձի եսից են ստանում իրերն ու երևույթներն իրենց գնահատությունները, համարվում իրական կամ ոչ իրական, ճշմարիտ կամ սխալ, օգտակար կամ վնասակար, լավ կամ վատ, ցանկալի կամ ոչ ցանկալի, անհրաժեշտ կամ ոչ անհրաժեշտ և այլն: *Լեզուն ու խոսքն էլ համապատասխան սրան ունեն եսակենտրոն կառուցվածք*»<sup>5</sup>: Այս տեսակետը հետաքրքրական է և ուշադրություն է հրավիրում մի շարք հանգամանքների: Պ. Պողոսյանի հոդվածում կան նուրբ դիտարկումներ, որոնք մտորելու տեղիք են տալիս:

Այնուամենայնիվ մենք ընդունում ենք այն տեսակետը, որ վերը նշված կապակցություններում ուղղական հոլովով անձնական դերանունները ստորոգելիական վերադիրներ են, քանի որ ենթակայի շարադասությունը պետք է փոխվեր տրամաբանական շեշտի փոփոխության հետևանքով, որն առկա չէ բերված կապակցություններում: Հավելենք նաև մի դիտարկում. եթե *անձնական դերանուն+են (վերացական բայ)* կապակցության հետ, որը մենք համարում ենք ստորոգյալ, գործածվի անձնական դերանունով արտահայտված ենթակա, ապա

<sup>3</sup> Գ. Ջահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Եր., 1974, էջ 410

<sup>4</sup> Տե՛ս Պ. Պողոսյան, Եսն իբրև հաղորդակցման ելակետ // «Բանբեր Երևանի համալսարանի», 1987, հ. 2, էջ 68-76:

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 68:

դարձյալ կգործի ենթակա-ստորոգյալ համաձայնությունը: Հիշենք Վ. Տերյանի հայտնի տողը. *Ես էլ դու եմ, ես չկամ*: Կամ Հ. Մահյանի հետևյալ տողերը. *Ես էությունս դարձա դու, / Դու էությունս դարձար ես*: Վերջին օրինակում (*դու էությունս դարձար ես*) ենթական և վերացական բայը երկրորդ դեմքով են, թեև ստորոգելին (*ես*) առաջին դեմքի է, որը հակասում է խոսքի՝ եսակենտրոն կառուցվածք ունենալու դրույթին: Իհարկե, նման կառույցները հազվադեպ են գործածվում, և անձնական դերանուններն այստեղ ոճական երանգավորում ունեն, սակայն կարծում ենք, որ եթե *Ավագը ես եմ* նախադասության մեջ առկա է *վերադիր անձնական դերանուն-եմ* համաձայնությունը, ապա *Ես էլ դու եմ* կապակցության մեջ՝ *ենթակա անձնական դերանուն-եմ* համաձայնությունը:

Այսպիսով, եթե ստորոգելիական վերադիրն արտահայտված է *ես, դու, նա, մենք, դուք, նրանք* անձնական դերանուններով, ապա նրանց և հանգույցի (վերացական բայի) միջև գործում է դիմաթվային համաձայնություն:

Ինչպես նշվել է, դիմաթվային այդպիսի համաձայնություն է լինում նաև այն դեպքում, երբ վերադիրն արտահայտված է դիմորոշ հոդի միջոցով դեմքի կարգ ստացած դերանուններով: Դիմորոշ հոդի միջոցով դեմքի կարգ կարող են ստանալ *ինքս / ինքդ / ինքը, ինքներս / ինքներդ / ինքները (իրենք), քանի՞ սու / քանի՞ սդ / քանի՞ սը, մի քանիսս / մի քանիսդ / մի քանիսը, ամեն մեկս / ամեն մեկդ / ամեն մեկը, ամենքս / ամենքդ / ամենքը, բոլորս / բոլորդ / բոլորը, յուրաքանչյուրս / յուրաքանչյուրդ / յուրաքանչյուրը, ոչ մեկս / ոչ մեկդ / ոչ մեկը* դերանունները: Այսինքն՝ այս դերանունների *ս, դ* հոդերն ունեցող ձևերով արտահայտված ստորոգելիների հետ հանգույցը (կամ վերացական բայը) դրվում է համապատասխանաբար առաջին կամ երկրորդ դեմքով, իսկ *ը* կամ *ն* հոդն ունեցող դերանունների հետ՝ երրորդ դեմքով: Կարող է տպավորություն ստեղծվել, որ երրորդ դեմքի դեպքում համաձայնություն չի գործում, և դեմքի կարգի արտահայտությունը չեզոքանում է, ինչպես գոյականների հետ գործածվող երրորդ դեմքի ստորոգյալների դեպքում է համարվում, սակայն կարծում ենք, որ այդ դեպքում էլ համաձայնական կապ կա, որովհետև բացառվում է այլ դեմքով հանգույցի գործածումը, ինչպես *նա* անձնական դերանունով արտահայտված ստորոգելիի դեպքում: Հմնտ.՝ *Մեղավորը ես եմ / դու ես / նա է: Մեղավորը բոլորս ենք / բոլորդ եք / բոլորն են*:

Ինչպես նշվեց, դիմորոշ հոդի միջոցով դեմքի կարգ կարող են ստանալ *ինքս / ինքդ / ինքը, ինքներս / ինքներդ / ինքները (իրենք), քանի՞ սու / քանի՞ սդ / քանի՞ սը, մի քանիսս / մի քանիսդ / մի քանիսը, ամեն մեկս / ամեն մեկդ / ամեն մեկը, ամենքս / ամենքդ / ամենքը, բոլորս / բոլորդ / բոլորը, յուրաքանչյուրս / յուրաքանչյուրդ / յուրաքանչյուրը, ոչ մեկս / ոչ մեկդ / ոչ մեկը* դերանունները: Ի տարբերություն *ես, դու, նա,*

*մենք, դուք, նրանք* դերանուններով արտահայտված ստորոգելիների, որոնց կիրառության դեպքում նրանց և հանգույցի (կամ վերացական բայի) միջև պարտադիր դրսևորվում է դիմաթվային համաձայնություն, սրանց գործածության դեպքում կարող են լինել դիմաթվային անհամաձայնություններ, թեև ընդհանուր առմամբ դրսևորվում է համաձայնական կապ:

Եթե որպես ստորոգելիական վերադիր հանդես են գալիս *ինքս / ինքդ / ինքք, ինքներս / ինքներդ / ինքներք (իրենք)* ձևերը, ապա նրանց և հանգույցի (կամ վերացական բայի) միջև պարտադիր դրսևորվում է դիմաթվային համաձայնություն, ինչպես՝ *Մեղավորը ինքս եմ / ինքդ ես / ինքն է: Մեղավորը ինքներս ենք / ինքներդ եք / ինքներն են (իրենք են):*

*Բոլորս / բոլորդ / բոլորք* ձևերով արտահայտված ստորոգելիական վերադիրների կիրառության դեպքում էլ նրանց և հանգույցի (կամ վերացական բայի) միջև պարտադիր դրսևորվում է դիմաթվային համաձայնություն: Միայն պետք է հաշվի առնել, որ *բոլորս / բոլորդ / բոլորք* ձևերը ձևաբանական թիվ չունեն, և նրանց հոգնակիությունը դրսևորվում է բառիմաստի միջոցով, իսկ հանգույցինը (կամ վերացական բայինը)՝ ձևաբանական թվով, ինչպես՝ *Մեղավորը բոլորս ենք / բոլորդ եք / բոլորն են:*

Համաձայնության վերը նշված նույն՝ դիմաթվային կապն է գործում նաև այն դեպքում, երբ վերադիրն արտահայտվում է *ամենքս / ամենքդ / ամենքը* ձևերից որևէ մեկով, ինչպես՝ *Մեղավորը ամենքս ենք / ամենքդ եք / ամենքն են:* Այսինքն՝ այս դեպքում էլ, թվայինից բացի, գործում է *իմաստային հոգնակիություն-ձևաբանական հոգնակիություն* կապը:

Որպես ստորոգելիական վերադիր *քանի՞սս / քանի՞սդ / քանի՞սք* ձևերի գործածվելու դեպքում նրանց և հանգույցի (կամ վերացական բայի) միջև հիմնականում գործում է դիմաթվային համաձայնական կապ, սակայն հնարավոր են նաև անհամաձայնության դեպքեր: Նախ նշենք, որ այս ձևերն էլ քերականական թիվ չունեն, սակայն իմաստային առումով արտահայտում են հոգնակիություն, ուստի թվային համաձայնությունը նրանց և հանգույցի (կամ վերացական բայի) միջև դրսևորվում է *իմաստային հոգնակիություն-ձևաբանական հոգնակիություն* կապով: Գործում է նաև դիմային համաձայնություն, ինչպես՝ *Մասնակիցները քանի՞սս ենք / քանի՞սդ եք / քանի՞սն են:* Սակայն երբեմն, հատկապես խոսակցական լեզվում, դրսևորվում է դիմաթվային անհամաձայնություն. առաջին և երկրորդ դեմքերի ձևերում գործածվում է երրորդ դեմքի եզակի թվի բայական ձև՝ *Քանի՞սս է / քանի՞սդ է մեղավոր, փոխանակ՝ Քանի՞սս ենք / քանի՞սդ եք մեղավոր* ձևերի: Այսպիսի անհամաձայնություն հատկապես լինում է շրջուն շարադասության դեպքում, երբ ենթական անորոշ առումով է: Սրանք մեր կարծիքով պետք է համարել շեղում: Ասվածները վերաբերում են նաև *մի քանիսս*

/ մի քանիսդ / մի քանիսը ձևերով արտահայտված վերադիրներ ունեցող ստորոգյալներին: Սրանցով արտահայտված վերադիրներ ունեցող կառույցներում ընդհանուր առմամբ գործում է դիմաթվային համաձայնական կապը, ինչպես՝ *Մեղավորը մի քանիսս ենք / մի քանիսդ եք / մի քանիսն են*, սակայն հնարավոր են վերը նշված շեղումները, ինչպես՝ *Մեղավորը մի քանիսս է / մի քանիսդ է*:

*Ամեն մեկս / ամեն մեկդ / ամեն մեկը*, ինչպես նաև *յուրաքանչյուրս / յուրաքանչյուրդ / յուրաքանչյուրը*, ձևերով արտահայտված ստորոգելիների և հանգույցների (վերացական բայերի) միջև էլ գործում է դիմաթվային համաձայնություն, ինչպես՝ *Մեղավորը ամեն մեկս ենք / ամեն մեկդ եք / ամեն մեկն է / յուրաքանչյուրս ենք / յուրաքանչյուրդ եք / յուրաքանչյուրն են*: Այսպիսի ստորոգյալների դեպքում, սակայն, անհամաձայնությունը ավելի հաճախ է հանդիպում, ինչպես՝ *Մեղավորը ամեն մեկս է / ամեն մեկդ է / յուրաքանչյուրս է / յուրաքանչյուրդ է*: Բայց եթե վերականգնվի ենթադրվող խորքային բացահայտյալը, համաձայնությունը պարտադիր է, ինչպես՝ *Մեղավորը մենք՝ յուրաքանչյուրս ենք: Մեղավորը մենք՝ ամեն մեկս ենք*: Խորքային բացահայտյալը (*մենք*) միայն հոգնակի թվով է, քանի որ այդ դերանուններն ընդհանուր առմամբ ամբողջություն են արտահայտում:

Նույնը վերաբերում է նաև *ոչ մեկս / ոչ մեկդ / ոչ մեկը* ձևերով արտահայտված վերադիր ունեցող ստորոգյալներին: *Մեղավորը ոչ մեկս չենք / ոչ մեկդ չեք / ոչ մեկը չէ* ձևերից բացի՝ գործածվում են նաև *Մեղավորը ոչ մեկս չէ / ոչ մեկդ չէ* անհամաձայն ձևերը:

Անհամաձայնության դրսևորումների պատճառը բացատրվում է նշված դերանունների իմաստային նրբերանգով: Ս. Աբրահամյանը որոշյալ դերանունները քննելիս նշում է հետևյալը. «Որոշյալ դերանունները, ըստ իրենց ընդհանրական իմաստի դրսևորման, բաժանվում են երեք խմբի՝

Ա. Դերանուններ, որոնք ցույց են տալիս առարկաների, նրանց քանակի ընդհանուր ամբողջությունը՝ չնշելով այդ ամբողջության մեջ մտնող առարկաներն առանձին-առանձին: Դրանք են *ամենքը, բոլորը*»:

Բ. Դերանուններ, որոնք առարկաների, նրանց քանակի ամբողջությունը ցույց են տալիս՝ շեշտելով ամբողջության մեջ մտնող առարկաներն առանձին-առանձին: Դրանք են՝ *ամեն, յուրաքանչյուր, ամեն ոք, ամեն ինչ, ամեն մի* (*ամեն մեկը*), *յուրաքանչյուր ոք*: Վերջիններս ունեն ժխտական ձևեր՝ *ոչինչ, ոչ ոք, ոչ մի* (*ոչ մեկը*)...:

Գ. Դերանուններ, որոնք ցույց են տալիս մի առանձին առարկայի (հավաքական կամ ոչ հավաքական) ամբողջությունը: Այդ դերանուններն են՝ *ողջ, ամբողջ, համայն*<sup>6</sup>:

<sup>6</sup> Ս. Աբրահամյան, Ժամանակակից գրական հայերեն, Եր., 1981, էջ 181-182:

Այսինքն՝ երբ ամբողջության մեջ մտնող առարկաները կամ անձե-  
րը ընկալվում են առանձին-առանձին, առաջ է գալիս նաև իմաստային  
եզակիության ընկալում: Այս իրողությունն էլ պատճառ է դառնում ան-  
համաձայնության կամ միգուցե մեկ այլ իմաստային համաձայնու-  
թյան՝ եզակիության իմաստ-ձևաբանական եզակի թիվ: Նման դեպքում  
չի լինում նաև դիմային համաձայնություն, քանի որ բայական դեմքն ու  
թիվն էլ դերանվանականի նման միասնաբար են արտահայտվում:

Տարբեր դեմքերով արտահայտված վերադիրների դեպքում համա-  
ձայնությունն իրականանում է ըստ դիմային առաջնության, ինչպես՝  
*ես ու դու ենք, դու և նա եք*: Բնական է, որ այս դեպքում թվային համա-  
ձայնությունը լինում է *բազմակիություն-հոգնակիություն* հարաբե-  
րությամբ:

Ընդհանրապես վերադրի և հանգույցի միջև թվային համաձայ-  
նությունը դրսևորվում է երեք ձևով՝

ա) *եզակի կամ հոգնակի թվով վերադիր - եզակի կամ հոգնակի  
թվով հանգույց* (կամ վերացական բայ), օրինակ՝ *Մեղավորը էս էմ: Մե-  
ղավորը մենք ենք*.

բ) *բազմակի վերադիր - հոգնակի թվով հանգույց* (կամ վերացա-  
կան բայ), օրինակ՝ *Մեղավորը էս ու դու ենք*.

գ) *հոգնակիության բառիմաստով վերադիր - հոգնակի թվով հան-  
գույց* (կամ վերացական բայ), օրինակ՝ *Մեղավորը բոլորս ենք*.

դ) *եզակիության բառիմաստով վերադիր - եզակի թվով հանգույց*  
(կամ վերացական բայ), օրինակ՝ *Մեղավորը մեկն է*:

Եթե ընդհանրացնենք, ապա կստացվի երեք հարաբերություն՝  
*ձևաբանական թիվ-ձևաբանական թիվ, բազմակիություն-ձևաբանա-  
կան թիվ, իմաստային թիվ-ձևաբանական թիվ*:

Ինչպես նշվել է, ստորոգելիական վերադրի և հանգույցի (կամ վե-  
րացական բայի) միջև դիմաթվային համաձայնություն է դրսևորվում  
նաև այն դեպքում, երբ վերադիրն արտահայտվում է այնպիսի գոյա-  
կաններով, ածականներով, թվականներով կամ դերբայներով, որոնք  
դիմորոշ հոդերի միջոցով դեմքի կարգ են ստացել, ինչպես՝ *Ձեզ խան-  
գարողը ուսանողներս ենք: Հեղինակը նվաստս էմ: Պատճառը երեքս  
ենք: Նրան օգնողը նվիրված աշխատողներդ եք*: Այս դեպքում էլ ընդ-  
հանուր առմամբ վերադրի և հանգույցի դիմաթվային համաձայնու-  
թյան հիմունքները նույնն են, ինչ որ դիմորոշ հոդերի միջոցով դեմքի  
կարգ ստացած դերանուններով արտահայտված վերադիրների ու  
հանգույցների դեպքում: Միայն թե այս կառույցներում կարծես ավելի  
շեշտված է զգացվում անձնական դերանուններով արտահայտված  
խորքային բացահայտիչների ազդեցությունը՝ *Ձեզ խանգարողը մենք՝  
ուսանողներս ենք: Հեղինակը էս՝ նվաստս էմ: Պատճառը մենք՝ երեքս  
ենք: Նրան օգնողը դուք՝ նվիրված աշխատողներդ եք*:

Մինչ այժմ հիմնականում խոսվեց դիմաթվային այն համաձայ-

նության մասին, որն առկա է դիմորոշ հոդերի միջոցով դեմքի կարգ ստացած բառերով ստորոգելիների և հանգույցի միջև, սակայն առանց դիմորոշ հոդերի վերադիրների և հանգույցի (վերացական բայի) միջև ևս հնարավոր է թվային համաձայնություն: Մ. Աբեղյանը այդպիսի երեք դեպք է նշում: Նա գրում է. «Գոյական ստորոգյալը<sup>7</sup> *հոգնակի* է դրվում, և բայը ստորոգյալի հետ է համաձայնում.

1. Երբ ենթական եզակի ձևով հոգնական նշականություն ունի: Օրինակ՝ Այս իմ գրքերն են.- Այս են նրա ասած խոսքերը.- Այն քո ընկերներն են (փոխանակ՝ սրանք իմ գրքերն են. նրանք քո ընկերներն են)....:

2. Երբ ենթական եզակի է, բայց ստորոգյալը իր նշանակությամբ պետք է հոգնակի լինի: Օրինակ՝ Գազանի բնակարանը լեռներն ու ձորերն են....:

3. Երբ դերանուն ենթական զեղչված է. օրինակ՝ Բայց Գարեգինը չթողեց, թե՛ ավելորդ բաներ են....»<sup>8</sup>: Այսինքն՝ *դրանք ավելորդ բաներ են*:

Կարծում ենք, որ երրորդ դեպքում դեր է խաղում նաև զեղչված ենթակայի ենթադրյալ թիվը, ուստի եղածը նաև ենթակա-ստորոգյալ համաձայնության հետևանք է:

Թվում է, թե նշված դեպքերում համաձայնությունը միայն թվային է, սակայն ասենք, որ կա նաև այսպիսի կարծիք: Մ. Պապոյանը գրում է. «Ումանք կարծում են, թե հայերենում գոյականը գուրկ է **դեմքի** քերականական կարգից: Դա ճիշտ չէ: Գոյականը ունի դեմքի քերականական կարգ: Ասվածը պարզ երևում է, երբ անձնական երրորդ դեմքի դերանունը փոխարինում ենք որևէ գոյականով: Հմմտ. (Ես գնացի, Դու գնացիր) **Նա գնաց, Արամը գնաց**: Ուրեմն ժամանակակից հայերենի բովանդակ բառապաշարում առկա բոլոր գոյականները (և գոյականաբար կիրառված այլ բառեր) ունեն երրորդ դեմքի քերականական կարգ: Այս է փաստում նաև այն օրինաչափությունը, որ դիմավոր բայը (բայ-ստորոգյալը) գոյականի կողքին դրվում է **երրորդ դեմքով**: Գոյականի երրորդ դեմքը կարող է փոխվել **երկրորդ** կամ **առաջին** դեմքի, եթե նրա ծայրին դրվի համապատասխան դիմորոշ մի հոդ **դ, ս**<sup>9</sup>: Եթե ընդունենք այս տեսակետը, ապա պետք է ընդունենք, որ վերը նշված դեպքում էլ առկա է ոչ միայն թվային, այլև դիմային համաձայնություն՝ երրորդ դեմքով: Իրոք, եթե ընդունված է, որ երրորդ դեմքի համարվող *ինքը* դերանունը դիմորոշ հոդեր ստանալով արտահայտում է առաջին և երկրորդ դեմքեր *ինքս, ինքդ*, ապա նույն տրամաբանությամբ էլ երրորդ դեմքի իմաստով գոյականը, *ս* և *դ* դիմորոշ հոդեր ստանալով, արտահայտում է առաջին և երկրորդ դեմքերի իմաստներ: Մակայն սա

<sup>7</sup> Մ. Աբեղյանը այսպես է անվանում ստորոգելին:

<sup>8</sup> Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Եր., 1965, էջ 507-508:

<sup>9</sup> Մ. Պապոյան, Ժամանակակից հայոց լեզվի գործնական աշխատանքների ձեռնարկ: Շարահյուսություն, Եր., 2004, էջ 17:



մի առանձին քննության նյութ է, որին այստեղ հանգամանորեն չենք անդրադառնում:

Նշենք նաև, որ մի շարք դեպքերում թվային համաձայնության կապ է դրսևորվում *ենթակայի* և *վերադրի* միջև, սակայն դա ևս մի առանձին քննության նյութ է: Թվային այդ համաձայնությունը սերտորեն առնչվում է ենթակայի խոսքիմասային արտահայտությանը, քերականական կամ իմաստային թվին, բազմակիությանը:

Այստեղ պետք է անդրադառնանք նաև մի հարցի, որն ինչ-որ չափով առնչվում է վերն ասվածներին: Ժամանակակից հայերենում կան մի շարք կապակցություններ, որոնք համարվում են դիմավոր միակազմ նախադասություններ (օրինակ՝ *Ամառ է*): Այսպիսի կապակցությունները լեզվաբանների մի մասը համարում է *ենթակա-ստորոգյալ* կապակցություն: Ռ. Իշխանյանը գրում է. «Պետք է տարբերակել *Աշունքանում է* և *Աշուն է*, *Մթնում է* և *Մուր է* ու համանման հակադիր ձևերը, որոնցից առաջինները անենթակա են, իսկ երկրորդները՝ ենթակայով. բերված օրինակներում ենթակա են *աշուն* և *մուր*, իսկ *է* բայը դարձյալ *կա*-ի նշանակություն ունի: Ճիշտ չէ այսպիսի կառույցներում *աշուն*, *մուր* և այլ գոյականներ ստորոգելիական վերադիր համարելը»<sup>10</sup>:

Մենք ևս այդ կարծիքին ենք և որպես ապացույց՝ հավելենք հետևյալը. միակազմ նախադասություններ համարվող նշված կապակցությունների բաղադրիչների միջև թվային համաձայնություն կա, ինչպես՝ *Ցուրտ է: Ցրտեր են: Անձրև է: Անձրևներ են: Շոգ է: Շոգեր են*: Այսինքն՝ այս դեպքում առկա է ենթակայի և ստորոգյալի միջև գործող թվային օրինաչափ համաձայնությունը, այլ ոչ թե վերադրի և հանգույցի միջև դրսևորվող թվային այն համաձայնական կապը, որի մասին նշվեց վերը՝ Մ. Աբեղյանի գրվածքից մեջբերումով: Մրանից էլ պարզ է դառնում, որ այդ կապակցությունները բաղկացած են ենթակայից և ստորոգյալից: Ուշադրություն դարձնենք նաև այն հանգամանքին, որ այդ կապակցություններում անվանական մասը դրվում է ուղղական հոլովով, այսինքն՝ այն հոլովով, ինչ ենթական:

Այսպիսով՝ վերադրի և հանգույցի (կամ վերացական բայի) միջև դիմաթվային պարտադիր համաձայնություն է գործում այն դեպքում, երբ վերադիրն արտահայտված է ուղղական հոլովով դրված անձնական դերանունով: Եթե վերադիրն արտահայտված է ուղղական հոլովով դրված այնպիսի բառով, որը ստացական հոդի միջոցով արտահայտված դեմքի կարգ ունի, ապա հնարավոր են անհամաձայնության որոշ դեպքեր: Դիմորոշ հոդի միջոցով դեմքի կարգ չստացած վերադիրների և հանգույցների միջև որոշ դեպքերում հնարավոր է թվային համաձայնություն, թեև լայն առումով այդ դեպքում ևս առկա է նաև դիմալի համաձայնություն՝ երրորդ դեմքով:

<sup>10</sup> Ռ. Իշխանյան, Արդի հայերենի շարահյուսություն. պարզ նախադասություն, էջ 114:

*Հաստատման-ժխտման կարգով համաձայնություն:* Ինչպես նշվել է, վերադրի և հանգույցի միջև համաձայնական կապ կարող է լինել նաև հաստատման-ժխտման կարգով: Այդ կարգը դիմավոր բայերին և ընդհանրապես ստորոգմանը միշտ բնորոշ է: Ն. Պառնասյանը գրում է. «Հաստատում-ժխտումն այն կարգն է, որով առաջին հերթին բնութագրվում է ստորոգումը: Որոշ առումով այն նույնանում է վերջինիս հետ, քանի որ ստորոգում նշանակում է ամենից առաջ հենց որևէ փաստի հաստատում կամ ժխտում (հմմտ. *Շենքը բարձրահարկ է և Շենքը բարձրահարկ չէ*): Այդ է պատճառը, որ այս կարգն ընդհանրական է և բնորոշ բոլոր նախադասություններին»<sup>11</sup>: Եթե հաստատման-ժխտման կարգը միշտ բնորոշ է դիմավոր բայերին, ապա մնում է պարզել, թե այն երբ կարող է բնորոշ լինել ստորոգելիական վերադրիներին, հետևաբար և որ դեպքում է հնարավոր այս կարգով համաձայնությունը: Ժխտման իմաստը բնորոշ է ժխտական դերանուններին: Այդ դերանուններն են *ոչ ոք, ոչինչ, ոչ մեկը, ոչ մի*: Սրանց ժխտումը իմաստային է, բայց այս դերանունները, հակադրվելով *ամեն ոք, ամեն ինչ, ամեն մեկը, ամեն մի* ձևերին, կարծես թե զուգահեռ են դառնում բայական դրական և ժշտական ձևերին: Այդ է պատճառը, որ Ս. Աբրահամյանը դրական և ժխտական ձևերը միավորում է դերանվան մեկ տեսակի մեջ: Նա գրում է. «...հաստատական որոշյալ դերանունների և դրանց համապատասխան ժխտական որոշյալ դերանունների ցույց տված հարաբերության մեջ տարբերություն չկա. դրանք բոլորն ունեն հանրական իմաստ: Տարբերությունն այն է, որ միևնույն իմաստը դերանունների մի մասի մեջ հաստատական ձևով է արտահայտված, իսկ ժխտական ձևերի մեջ՝ ժխտական ձևով, մի դեպքում հաստատվում է, մյուս դեպքում՝ ժխտվում: Հիշենք, որ լեզվի մեջ ժխտական բառերն ու բառաձևերը համապատասխան հաստատական բառերի ու բառաձևերի հետ միասին մտնում են բառերի միևնույն տեսակի մեջ (հմմտ. *գրեցի-չգրեցի, կգամ-չեմ գա, կարդում եմ-չեմ կարդում, վերջացած-չվերջացած* և այլն)»<sup>12</sup>:

Ժխտական դերանուններից որպես վերադիր կարող են գործածվել առաջին երեքը, ինչպես՝ *Ոչ ոք չէ. Ոչ մեկը չէ. Ոչինչ չէ*<sup>13</sup>: Ժխտական դերանունները դերանվան առանձին տեսակ համարվեն թե ոչ, երբ ստորոգելիական վերադիրն արտահայտված է նրանցով, ապա վերադրի և հանգույցի (վերացական բայի) միջև դրսևորվում է ժխտման կարգով համաձայնություն: Այդպիսի համաձայնություն կա նաև այն դեպքում,

<sup>11</sup> Ն. Պառնասյան, Նախադասության քերականական կարգերը ժամանակակից հայերենում, Եր., 1986, էջ 101:

<sup>12</sup> Ս. Աբրահամյան, Ն. Պառնասյան, Հ. Օհանյան, Ժամանակակից հայոց լեզու, հ. 2, Եր., 1974, էջ 217:

<sup>13</sup> *Ոչինչ* ժխտական դերանվան հետ չպետք է շփոթել գոյականական իմաստով գործածվող *ոչինչ* բառը, որը նշանակում է *անգոյություն, չնչին բան*, օրինակ՝ *Քո կատարածը նրա կատարածի համեմատությամբ ոչինչ է*:

երբ վերադիրն ունի վերը նշված չորրորդ՝ *ոչ մի* ժխտական դերանվամբ արտահայտված որոշիչ, որի հետ իմաստային սերտ միասնություն է կազմում, ինչպես՝ *Դա ոչ մի բան չէ: Սա ոչ մի օգնություն էլ չէ:* Վերադիրի և հանգույցի միջև հաստատման-ժխտման կարգով համաձայնություն է լինում նաև այն դեպքում, երբ ստորոգելիական վերադիրը ժխտական մյուս դերանուններով արտահայտված լրացում է ստանում, ինչպես՝ *Դա ոչ մեկի գիրքը չէ: Դա ոչ ոքի գործը չէ:* Ինչպես տեսնում ենք, ժխտման կարգով համաձայնությունը պայմանավորված չէ դիմաթվային համաձայնության առկայությամբ:

Եթե ամփոփենք վերադիրի և հանգույցի (վերացական բայի) միջև դրսևորվող համաձայնական կապը, ապա կարող ենք ասել հետևյալը:

1. *Ես, դու, նա, մենք, դուք, նրանք* դերանունների վերադրային կիրառության դեպքում նրանց և հանգույցի (վերացական բայի) միջև գործում է դիմաթվային պարտադիր համաձայնություն:

2. *Բնքս / ինքդ / ինքը, ինքներս / ինքներդ / ինքները (իրենք), քանի սս / քանի սդ / քանի սը, մի քանիսս / մի քանիսդ / մի քանիսը, ամեն մեկս / ամեն մեկդ / ամեն մեկը, ամենքս / ամենքդ / ամենքը, բոլորս / բոլորդ / բոլորը, յուրաքանչյուրս / յուրաքանչյուրդ / յուրաքանչյուրը, ոչ մեկս / ոչ մեկդ / ոչ մեկը* դերանունների վերադրային կիրառության դեպքում նրանց և հանգույցի (վերացական բայի) միջև գործում է դիմաթվային համաձայնություն, որը կարող է խախտվել *քանի սս, քանի սդ, մի քանիսս, մի քանիսդ, ամեն մեկս, ամեն մեկդ, յուրաքանչյուրս, յուրաքանչյուրդ, ոչ մեկս, ոչ մեկդ* դերանունների կիրառման դեպքում:

3. *Ս, դ* հոդերով դեմքի կարգ ստացած գոյականներով, ածականներով, թվականներով, դերբայներով արտահայտված ստորոգելիների դեպքում նրանց և հանգույցի (վերացական բայի) միջև գործում է դիմաթվային համաձայնություն: Առանց դիմորոշ հոդերի գոյականներով, ածականներով, թվականներով, դերբայներով արտահայտված ստորոգելիների դեպքում նրանց և հանգույցի (վերացական բայի) միջև որոշ դեպքերում գործում է թվային համաձայնություն, թեև լայն ըմբռնմամբ կարելի է ասել, որ գործում է նաև դիմային համաձայնություն՝ երրորդ դեմքով:

4. Ժխտական դերանուններով արտահայտված ստորոգելիների դեպքում, դիմաթվային համաձայնությունից բացի (որը երբեմն կարող է խախտվել), գործում է նաև հաստատման-ժխտման կարգով համաձայնություն:

5. Հաստատման-ժխտման կարգով համաձայնություն վերադիրի և հանգույցի (վերացական բայի) միջև գործում է նաև այն դեպքում, երբ վերադիրն արտահայտված չէ ժխտական դերանունով, բայց ունի ժխտական դերանունով արտահայտված լրացում:

**Բանալի բառեր** – համաձայնություն, բաղադրյալ ստորոգյալ, դեմքի կարգ, թվի կարգ, անձնական դերանուն, ժխտական դերանուն

**АРТАШЕС САРКИСЯН** – *Согласование между частями составного сказуемого в современном армянском языке.* – В современном армянском языке между частями составного сказуемого может выявляться согласование. Оно в основном проявляется в категориях лица, числа и отрицания. Согласование выявляется тогда, когда одна из частей составного сказуемого выражена личным местоимением, отрицательным местоимением или словом, у которого есть категория лица, выраженная персонным артиклем.

**Ключевые слова:** *согласование, составное сказуемое, категория лица, категория числа, личное местоимение, отрицательное местоимение*

**ARTASHES SARKISYAN** – *Agreement between Components of Composite Predicate in Modern Armenian.* – In modern Armenian, there can be an agreement between the components of the composite predicate. It is mostly expressed by categories of person, number, and negation. The agreement is used when one of the components of the composite predicate is expressed by a personal pronoun, negative pronoun or by a word which has a category of person, by adding an article.

**Key words:** *agreement, compound predicate, category of person, category of number, personal pronoun, negative pronoun*